# 2021-2022 ուստարվա

# 8-րդ ա դասարանի դասղեկի տարեկան Հաշվետվություն

Մինչ ուսումնական պրոցեսի սկսվելը կարգի եմ բերել դասասենյակները, կատարել եմ դասագրքերի բաշխում: Մշտապես կատարել եմ աշակերտների հաշվառում, տեղեկացել բացակայությունների պատճառներին, սահմանել եմ վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ՝ աշխատանքներ տարել ժամանակին կանխելու դրանք:

Դասարանների հետ միասին մասնակցել եմ գիտելիքի օրվա միջոցառմանը, դպրոցի ձևավորմանը:

Տարեսկզբին յուրաքանչյուր դասարանում կազմել ենք հերթապահության և դասացուցակի պատի թերթեր, ընտրել դասարանի ավագ, ավագի օգնականներ և սանիտարներ: Բոլոր դասարաններում անցկացրել եմ ծնողական ժողովներ, ծնող-ուսուցիչ հանդիպումներ, անհատական հանդիպումներ ծնողների հետ՝ կապված երեխայի ուսումնադաստիարակչական տարբեր հարցերի հետ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության համար մշտապես համագործակցել եմ դասավանդող բոլոր ուսուցիչների հետ:

Տոների, հիշատակի օրերին ընդառաջ դասղեկի ժամերը հատկացրել եմ դրանց, կազմել ենք պատի թերթեր: Անցկացրել եմ աշակերտական ժողովներ՝ լսելու աշակերտների կարծիքներն ու առաջարկությունները այս կամ այն հացերի վերաբերյալ, պարզելու և լուծելու տարաբնույթ հարցեր ու խնդիրներ:

Տարվա ընթացքում տնօրինությանը ներկայացրել եմ սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն: Իրականացրել եմ դասարանների համար սահմանված գործավարությունը:

Տարբեր աշակերտների համար ուսումնադաստիարակչական տարբեր աշխատանքներ և միջոցառումներ եմ ձեռք առել՝ համագործակցելով տնօրենի և տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի հետ:
8-րդ դասարանի աշակերտները սիրով հյուրընկալեցին Ստեփանավանի թիվ 1 դպրոցի աշակերտ՝ Մամախանյան Մարոյին,իսկ նույն դասարանի աշակերտներ՝ Գրիգորյան Եվային ու Գրիգորյան Դավիթին ճանապարհեցինք նույն դպրոց: Աշակերտների հետ այցելեցինք մեր համայնքի պատմաճարտարապետական կոթողներ: Դասարանի տարբեր աշակերտներ մասնակցել են դպրոցում կազմակերպված միջոցառումներին՝ տարբեր առարկաներից:

Բոլոր դասարանները սեպտեմբերի 27-ին մասնակցել են մոմվառության՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմի զոհերի, այնուհետև՝ Աբովյանի պանթեոն, դեկտեմբերի 7-ին այցելել են 1988թ-ի երկրաշարժի զոհերի նվիրված հուշա-կոթող, ապրիլի 24-ին այցելել ենք հուշահամալիր, ապրիլի 30-ին մասնակցել են համապետական շաբաթօրյակին :

## Դասարանների Առաջադիմությունը

8-րդ ա դասարան՝
Տարեսկիզբ -31 աշակերտ
Տարեվերջ -30 աշակերտ
Գերազանցիկ 1, հարվածային 5, միջակ 24
Առաջադիմություն-100%
Որակ-30%

Դասղեկ՝ Լ. Մանուկյան